E-LEARNING GSU ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Վ. Կ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԳՊՀ ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի դասախոս
Մ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԳՊՀ ՄԻՀՏ 1-ին կուրսի մագիստրանտ

Գավառի պետական համալսարանում ներդրված E-learning GSU էլեկտրոնային ուսուցման համակարգը (www.elearning.gsu.am) նախատեսված է էլեկտրոնային ուսուցման գործընթացի կազմակերպման համար: E-learning GSU համակարգի ինֆորմացիոն ապահովումը ինֆորմացիայի դասակարգման և կոդավորման միացյալ համակարգի, փաստաթղթերի միօրինակացված համակարգի ինֆորմացիոն հոսքերի սխեմաների, ինչպես նաև տվյալների բազաների կառուցման մեթոդոլոգիայի ամբողջությունն է:

E-learning GSU համակարգում ինֆորմացիոն ապահովման իրականացման գործընթացը բաղկացած է երկու հիմնական փուլերից՝

1. «Ադմինիստրատոր» օգտատերի (ադմինիստրատոր) կողմից առարկաների ուսուցման, դասախոսների և ուսանողների տիրույթների ստեղծում և կարգաբերումների իրականացում,
2. «Դասախոս» օգտատերի (դասախոսի) կողմից առարկաների ուսուցման տիրույթների բովանդակության համալրում:

Ադմինիստրատորի կողմից ինֆորմացիոն ապահովման գործընթացը կատարվում է հետևյալ փուլերով.

1. Ադմինիստրատորն ամբիոնի կողմից էլեկտրոնային տարբերակով (Excel ձևաչափ) ստանում է տվյալ ամբիոնի դասախոսների ցուցակը: Դասախոսների ցուցակը պարունակում է հետևյալ տվյալները.
   ա. Ամբիոն,
   բ. Դասախոսի ազգանուն, անուն, հայրանուն,
   գ. Դասախոսի էլեկտրոնային փոստի հասցե:
2. Ադմինիստրատորի կողմից համակարգի միջավայրում ստեղծվում է դասախոսների անվանական հաշիվ տիրույթները՝ ըստ ամբիոնների: Այս տվյալների մուտքագրման համար կիրառվում է նկ.1-ում բերված պատուհանը: Այս փուլում ձևավորվում են ցուցակներ, որտեղ պահպանվում են տվյալ դասախոսի անվանական հաշիվ-տիրույթի վերաբերյալ տվյալները: Ցուցակն իր մեջ պարունակում է հետևյալ դաշտերը՝
   ա. Ամբիոն,

բ. Դասախոսի ազգանուն, անուն, հայրանուն,
գ. Դասախոսի էլեկտրոնային փոստի հասցե,
դ. Համակարգի մուտքաբառ,
ե. Համակարգի գաղտնաբառ:

Վերը նկարագրված ցուցակը՝ ըստ տվյալ ամբիոնի դասախոսների ցանկի ուղարկվում է համապատասխան ամբիոն, իսկ դասախոսի էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվում է նամակ, որտեղ առկա է

1. Համակարգ մուտք գործելու, ուղեցույցերի հղումները,
2. Ցուցակում տվյալ դասախոսին համապատասխանող գրանցումը՝ համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ տվյալները:

Նկ.1 Ադմինիստրատորի տիրույթի «Դասախոս» և «Ուսանող» օգտատերերի ստեղծման պատուհանը

3. Հաջորդ փուլում, ըստ դեկանատի կողմից հաստատված խմբերի վերաբերյալ տվյալների ցուցակի, ադմինիստրատորի կողմից կատարվում է տվյալ խմբի համար անվանական «Ուսանող» օգտատերի տիրույթի ստեղ-

ծում: Տիրույթի օգտագործման վերաբերյալ անհրաժեշտ տվյալները ցուցակի տեսքով ուղարկվում է դեկանատ: Այս ցուցակն ունի տվյալների հետևյալ դաշտերը՝

ա. Ֆակուլտետ,
բ. Խումբ (մասնագիտություն, կուրս),
գ. Համակարգի մուտքաբառ,
դ. Համակարգի գաղտնաբառ:

4. Դեկանատի կողմից առանձին ֆայլերի տեսքով տրամադրվում են նաև տվյալ խմբի ուսումնական պլանը և ուսանողների ցուցակը: Այս ֆայլերը՝ որպես էլեկտրոնային ռեսուրսներ, ադմինսիտրատորի կողմից .pdf տարբերակով տեղադրվում են տվյալ խմբի «Ուսումնական գործընթաց» բաժնի ներքո:

5. Հաջորդ փուլում իրականացվում է առարկաների ուսուցման տիրույթների ստեղծման գործընթացը: Ադմինիստրատորը, դեկանատից ստանալով հաստատված ուսումնական պլանները, յուրաքանչյուր ամբիոնի մակարդակում ստեղծում է համապատասխան առարկաների տիրույթներ: Առարկայի վիտուալ-տիրույթն իր մեջ ներառում է 12 բաղադրիչներ.

ա. Դասընթացի ընդհանուր նկարագիրը,
բ. Դասախոսություններ,
գ. Առաջարկվող մասնագիտական գրականություն,
դ. էլեկտրոնային գրքեր,
ե. Օգտակար համացանցային կայքեր,
զ. Օգտակար տեսանյութեր,
է. Գործնական աշխատանքներ,
ը. Անհատական և կուրսային աշխատանքների թեմաներ,
թ. Հարցաշարեր,
ժ. Տեսաձայնագրված դասախոսություններ,
ի. Հայտարարություններ,
լ. Այլ էլեկտրոնային նյութեր:

Այս 12 բաղադրիչներում տեղադրված է ձևանմուշային տեքստային ինֆորմացիա (օրինակ՝ դասընթացի ընդհանուր նկարագիրը) և մշակված ձևանմուշային ֆայլեր (օրինակ՝ 1 վերնագրային էջից բաղկացած pdf ձևաչափով հարցաշար կամ դասախոսություն և այլն), որոնք հետագայում խմբագրվում են դասախոսի կողմից:

6. Ըստ դեկանատի կողմից հաստատված և ադմինիստրատորին տրամադրված ուսումնական բեռնվածքի՝ ադմինիտրատորը կատարում է արդեն համակարգում առկա առարկաների տիրույթների հասանելիության իրավունքների բաշխումը երկու օգտվողի դերերի համար՝

- «Առարկա-Դասախոս» հասանելիության սահմանում,
- «Առարկա-Խումբ» հասանելիության սահմանում :



Նկ 2. Առարկայի հասանելիության սահմանման պատուհանը

Նշված փուլերով ադմինիստրատորի կողմից համակարգի ինֆորմացիոն ապահովման իրականացման գործընթացը կրում է պարբերական բնույթ:

Ադմինիստարատորի կողմից իրականացված ինֆորմացիոն ապահովման գործընթացի իրականացումից հետո դասախոսն՝ ունենալով մուտքային տվյալներ, կարողանում է մուտք գործել համակարգ և կատարել իրեն կցագրված առարկաների փաթեթների մշակման գործընթացը: Առարկաների տիրույթների խմբագրման գործընթացն իրենից ներկայացնում է յուրաքանչյուր առարկայի մակարդակով 12 բաղադրիչներում տեսքտային ինֆորմացիայի խմբագրում և էլեկտրոնային ռեսուրսների տեղադրում (դասախոսությունների, էլեկտրոնային գրքերի և այլ ուսումնական նյութերի վերբեռնում):

12 բաղադրիչները, ըստ բովանդակության խմբագրման ձևի, բաժանվում են 2 խմբի՝

- Բաղադրիչներ, որտեղ խմբագրվում է տեքստային ինֆորմացիան (օրինակ՝ «Օգտակար համացանցային կայքեր»),

• Բաղադրիչներ, որտեղ խմբագրվում և տեղադրվում են էլեկտրոնային ռեսուրսներ (օրինակ՝ «Դասախոսություններ», «էլեկտրոնային գրքեր»):



Նկ.3 Առարկայի տիրույթի տեքստային ինֆորմացիայի խմբագրման պատուհանը



Նկ.4 Առարկայի տիրույթի ֆայլերի խմբագրման և տեղադրման պատուհանը

Համակարգի ինֆորմացիոն ապահովման մի շարք փաստաթղթեր հասանելի են համակարգի պաշտոնական կայք-էջում, որտեղ տեղադրված է նաև համակարգի տեխնիկական նկարագրությունը, դասախոսի

(https://www.youtube.com/watch?v=J4HvSvXVSZM) և ուսանողի (https://www.youtube.com/watch?v=gb-tcuZvvd8) օգտվողի տեսաուղեցույցները:

Առանցքային բառեր *- E-learning GSU, ինֆորմացիոն ապահովում, էլեկտրոնային ուսուցում, ուսուցման համակարգ*

Գրականություն

1. www.elearning.gsu.am ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման կայք
2. https://moodle.org/ - Moodle community website
3. **Винник В. К.,** Модель организации самостоятельной работы студентов с применением учебной платформы Moodle // Современные проблемы науки и образования. – 2013. – № 3

ИНФОРМАЦИОННОЕ ОБЕСПЕЧЕНИЕ СИСТЕМЫ ELEARNING-GSU

В. К. АВЕТИСЯН
Преподаватель кафедры ИВТ ГГУ
М. А. ОГАННИСЯН
Магистрант 1-ого курса кафедры ИВТ ГГУ

Работа посвящена описанию организации информационного обеспечения системы электронного обучения ELEARNING-GSU, разработанной и внедренной в Гаварском государственном университете.

INFORMATION SUP PORT OF THE OF THE SYSTEM ELEARNING-GSU

V. K. AVETISYAN
Lecturer of GSU Chair of Informatics and Computer Engineering
M. A. HOVHANNISYAN
First-year Student of GSU Department of Informatics and Computer Engineering, Master's Degree

The work is devoted to the description of the organization of information support of the electronic learning system ELEARNING-GSU, developed and implemented in Gavar State University.